Կարգապահական գործ թիվ ԿԳ-15004

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի օգոստոսի 26-ի թիվ 153-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/85-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԺՈՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Սարդարյանի, Մարտուն Փանոսյանի, Լիպարիտ Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ժորա Պետրոսյանին (արտոնագիր թիվ 1523) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը /այսուհետ նաև Դիմողը / 21.01.2015թ-ին գրություն է ուղարկել Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատ, որը մուտք է արվել 23.01.2015 թ-ին հայտնելով, որ իրենց կազմակերպության կողմից տրված հաղորդման հիման վրա ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում 14.04.2014 թ-ին ՀՀ քրեական օրենսգրքի 309 հոդվածի 2–րդ մասի հոդվածի հատկանիշներով, այն է՝ պաշտոնեական լիազորություններն անցնելը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով՝ հարուցվել է թիվ 62207614 քրեական գործը:

Դիմողը հայտնել է նաև , որ նշված քրեական գործի շրջանակներում հարցաքննվել է նաև տվյալ գործով տուժող Անդրանիկ Մխիթարյանի պարտապան ՀՊԳ-ի փաստաբան Ժորա Պետրոսյանը, որը Անդրանիկ Մխիթարյանի պաշտպանությունն իրականացրել է ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Շիրակի մարզի քննչական բաժնում քննվող ՀՀ քրեական օրենսգրքի 175–րդ հոդվածի հատկանիշներով հարուցված թիվ 18130813 գործի շրջանակներում:

Դիմողը վկայակոչել է 03.10.2014թ-ի ՀՔԾ կողմից կայացված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման

7-րդ էջի առաջին պարբերությունը, որտեղ արձանագրված է որ, «ինչ վերաբերվում է Ա. Մխիթարյանի այն հայտարարությանը, որ քննիչները չեն արձանագրել ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ բռնություններ գործադրելու մասին արված հայտարարությանը՝ հերքվել է ինչպես քննիչներ Հայկ Մարտիրոսյանի և Վիգեն Մարգարյանի, այնպես էլ Ա. Մարգարյանի պաշտպան Ժ. Պետրոսյանի ցուցմունքներով» պնդելով, որ այն թույլ է տալիս եզրակացնելու, որ նախաքննության մարմնի կողմից հարցաքննվել է նաև ՀՀ Հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբան Ժորա Պետրոսյանը:

Դիմողը գտնում է, որ ելնելով ՀՀ Փաստաբանության մասին օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.3.3 կետի պահանջներով ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբան Ժորա Պետրոսյանի /արտոնագիր 1523 / նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ և վերջինս ենթարկվի համապատասխան կարգապահական պատասխանատվության:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 10.02.2015թ. թիվ 27-Ա/ԿԳ15004 որոշմամբ փաստաբան Ժորա Պետրոսյանի (արտոնագիր թիվ 1523) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.6.1, 3.5.3 և 6.1.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Տիգրան Գալստյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Կարգապահական գործ նախապատրաստողիս 18.02.2015թ-ի գրությանը ի պատասխան 05.03.2015 թ-ին թիվ Ե/2015- 05.03. 126 գրությամբ դիմողը հայտնել է հետևյալը.

Ի պատասխան Ձեր 18.02.2015թ. գրությանը հայտնում եմ Ձեզ այն մասին, որ թիվ) 62207614 քրեական գործի նյութերին դիմող կողմս չի տիրապետում, հետևաբար այլ ապացույցներ այս պահին Ներկայացնել չենք կարող:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ 2014թ. հոկտեմբերի 3-ի թիվ 62207614 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը Դիմումատուի կողմից բողոքարկվել է Երևան քաղաքի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Վկայակոչված գործով առաջին դատական նիստն նշանակված է 2015թ. մարտի 12-ին, որի կայացման դեպքում ակնկալում ենք ստանալ՝ թիվ 62207614 քրեական գործի նյութերը:

Ապա 13.03. 2015թ-ին դիմողը էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է փաստաբան Ժորա Պետրոսյանի հարցաքննության արձանագրությունը, ըստ որի 30.07.2014թ-ին Ժորա Պետրոսյանը Գյումրի քաղաքում ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչ Ռ. Գևորգյանի կողմից որպես վկա հարցաքննվել է և տվել ցուցմունք այն մասին, որ

Անդրանիկ Մխիթարյանի պաշտպանությունը ստանձնել է արդեն իսկ ՀՔԾ-ում թիվ 62207614 քրեական գործի հարուցումից հետո 18.04.2014թ-ին: Ժ.Պետրոսյանը ցուցմունքում նշել է, որ իր պաշտպանյալ Ա. Մխիթարյանը թիվ 18130813 քրեական գործի նյութերին ծանոթանալու ընթացքում Ա Մխիթարյանը ասել է, որ իր բողոքի հիման վրա ՀՔԾ-ում քրեական գործի նախաքննությունը դեռևս ընթացքի մեջ է:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված էր:

Պատասխանողի համառոտ բացատրությունը.

27.01.2015թ-ին Ժորա Պետրոսյանը բացատրություն է տվել այն մասին, որ 22.10.2014թ-ին /իրականում 22.10.3013թ-ին/ Շիրակի մարզային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 18130813 քրեական գործը: Նույն օրը հանցագործության կատարման կասկածանքով բերման է ենթարկվել Անդրանիկ Արտյուշի Մխիթարյանը և ձերբակալվել:

Քանի որ Ա. Մխիթարյանը հրաժարվել է պաշտպան ունենալու իր իրավունքից նա ինչպես 23.10.2013 թ-ին որպես կասկածյալ, այնպես էլ 25.03.2015 թ-ին որպես մեղադրյալ հարցաքննվել է առանց պաշտպանի մասնակցության: Փաստաբանն իր բացատրության մեջ նշել է, որ 08.11.2013թ-ին Անդրանիկ Մխիթարյանի դիմումի հիման վրա նրան տրամադրվել է հանրային պաշտպան: Որպես Ա. Մխիթարյանի շահերի պաշտպան նշանակվել է ՀՊԳ փաստաբան Աննա Դավթյանը վերջինիս մասնակցությամբ 22.11.2103թ., 13.01.2014թ., և 10.02.2014թ. Ա. Մխիթարյանը հարցաքննվել է:

Փաստաբանը նշել է ,որ 24.03.2014թ-ին Ա. Մխիթարյանը «Արթիկ.. ՔԿՀ-ից դիմում է ներկայացրել Շիրակի մարզի դատախազին հայտնելով, որ 22.10.2013 թ-ին իրեն բերման ենթարկելուց ոստիկանության աշխատակիցների կողմից բռնության է ենթարկվել: Նույնաբովանդակ դիմում Ա. Մխիթարյանը ուղարկել է նաև ՀՀ ՀՔԾ և նշված փաստով 15.04.2014թ-ն հարուցվել է քրեական գործ: Ըստ պատասխանողի բացատրության ինքը հանրային պաշտպան է նշանակվել 17.03.2014թ-ին, իսկ Ա.Մխիթարյանի պաշտպանությունը ստանձնել է 18.04.2014 թ-ին: ՀՔԾ-ում քրեական գործը հարուցվել է 15.04.2014թ-ին նախքան իր կողմից Ա.Մխիթարյանի պաշտպան ներգրավվելը, ապա և մինչև քրեական գործի հարուցումը Ա.Մխիթարյանը իր ներկայությամբ չէր կարող հայտարարել իր նկատմամբ ոստիկանների կողմից բռնությունների ենթարկված լինելու փաստի վերաբերյալ:

Փաստաբան Ժորա Պետրոսյանը բացատրության մեջ նշել է նաև, որ թիվ 18130813 քրեական գործի նախաքննությունը ավարտվել է 30.05.2014թ-ին, որից հետո Ա. Մխիթարյանը ՀՔԾ նոր դիմում է ներկայացրել այն բովանդակությամբ, որ քննիչի և իր պաշտպանի ներկայությամբ հայտարարել է ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ բռնությունների վերաբերյալ, սակայն իր հայտարարությունները չեն արձանագրվել: Ժորա Պետրոսյանը շեշտել է նաև, որ ՀՔԾ-ում քրեական գործի հարուցումից հետո Ա.Մխիթարյանի կողմից նման հայտարարություն անելը արդեն իսկ էական նշանակություն չէր կարող ունենալ, քանի որ ՀՔԾ-ում արդեն իսկ հաղորդում կար և քրեական գործով կատարվում էր նախաքննություն: Ժորա Պետրոսյանը նշել է նաև, որ իր կողմից փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկություններ չեն հրապարակվել:

20.02.2015թ-ն պատասխանող փաստաբան Ժորա Պետրոսյանը

նույնաբովանդակ բացատրություն է տվել հավելելով նաև, որ փաստաբանական գործունեությամբ զբաղվելու արտոնագիրը ստացել է 2012թ-ին, որը կասեցվել է, քանի որ այդ ժամանակ աշխատել է ՀՀ Ոստիկանության համակարգում, ապա վերականգնվել է 2014թ-ի սկզբներին: Ըստ Ժ. Պետրոսյանի բացատրության Անդրանիկ Մխիթարյանի հետ առանձնազրույց է ունեցել 18.04.2014թ-ին նախքան կալանքը երկարացնելու միջնորդությունը դատարանի կողմից քննության առնելը, դրանից հետո ևս մի քանի անգամ առանձնազրույց է ունեցել նրան առաջադրված մեղադրանքը փոփոխելուց և քրեական գործի նյութերին ծանոթանալուց առաջ: Առանձնազրույցների ընթացքում Ա. Մխիթարյանը իրեն հայտնել է, որ իրեն ոստիկանների կողմից բռնության ենթարկելու վերաբերյալ բողոքներ է ներկայացրել ՀՀ ՀՔԾ և Շիրակի մարզի դատախազին և այդ կապակցությամբ ՀՔԾ–ում քննվում է քրեական գործ:

Ժորա Պետրոսյանը իր բացատրությամբ հայտնել է, որ ՀՔԾ-ում ինքը որպես վկա հարցաքննվել է 2014 թվականի հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբներին և չի առարկել հարցաքննության դեմ, քանի որ քննիչի կողմից ուղղված հարցերը վերաբերվել են այն ժամանակահատվածին, որի ընթացքում ինքն Անդրանիկ Մխիթարյանի պաշտպանը չի հանդիսացել և նրան ոչ մի իրավաբանական օգնություն և խորհրդատվություն չի տվել:

Ժորա Պետրոսյանն իր բացատրության մեջ նշել է, որ ՀՔԾ-ում քննվող քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու որոշման 7-րդ էջի առաջին պարբերությունում նշված այն հիմքը, որ իր ցուցմունքով հերքվել է ոստիկանության աշխատակիցների կողմից Ա. Մխիթարյանի նկատմամբ բռնություն գործադրելու փաստը, չի համապատասխանում իրականությանը, քանի որ իր ցուցմունքի բովանդակությունը այնպիսին է եղել, որ իր ցուցմունքով չէր կարող ինչպես հերքվել, այնպես էլ հաստատվել վերոնշյալ փաստը: Ըստ Ժորա Պետրոսյանի բացատրության իր ցուցմունքի բովանդակությունը հանդիսացել է այն, որ տվյալ ժամանակահատվածում ինքը չի եղել Ա. Մխիթարյանի պաշտպանը:

<u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը</u>

17.03.2015թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն. <<Ուսումնասիրելով կարգապահական վարույթի ընթացքում ձեռք բերված հնարավոր և անհրաժեշտ նյութերը և ապացույցները, հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում գնահատելով վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցները իրենց համակցությամբ, գործի լուծման համար բավարարության տեսանկյունից կարծում եմ, որ թիվ 27Ա/ԿԳ-15004 կարգապահական գործը վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանություններով.՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջով, այն է՝

8. Արգելվում է փաստաբանին որպես վկա հարցաքննել այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց

տալու կամ իրեն դիմելու կապակցությամբ: Սույն մասի իմաստով փաստաբանի կարգավիճակին է հավասարեցվում նաև փաստաբանի մոտ աշխատող ոչ փաստաբան յուրաքանչյուր անձ:

Ըստ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված 8-րդ մասի «**Արգելվում է փաստաբանին որպես վկա հարցաքննել»** եզրույթը ինչպես տառացի, այնպես էլ բառացի մեկնաբանությունը թույլ է տալիս կարծիք հայտնելու, որ փաստաբանը չէ, որ պետք է խոչընդոտի իրեն հարցաքննելուն, այլ հարցաքննության հրավիրած պաշտոնատար անձին է **արգելվում** հարցաքննելու փաստաբանին, քանզի փաստաբանին հարցաքննության հրավիրելուց առաջ նա **պարտավոր է** գիտակցել, որ արգելվում է փաստաբանին որպես վկա հարցաքննել այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու կամ իրեն դիմելու կապակցությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասը չի արգելում փաստաբանին հարցաքննվել, այլ արգելում է փաստաբանին հարցաքննելը, ուստի և պատասխանող հանրային պաշտպան Ժորա Պետրոսյանին ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչ Ռ. Գևորգյանի կողմից հարցաքննելը չի կարող հիմք հանդիսանալ Ժ. Պետրոսյանի որպես վկա հարցաքննվելու համար ենթարկելու կարգապահական պատասխանատվության «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի 8–րդ կետի խախտման հատկանիշներով:

Այլ փաստ է, երբ փաստաբանը, որպես վկա հարցաքննվել է այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու կամ իրեն դիմելու կապակցությամբ և ցուցմունքներ է տվել այն հանգամանքների վերաբերյալ, որոնք իրեն հայտնի են դարձել փաստաբանական ծառայությունների մատուցման կապակցությամբ, սակայն նույնիսկ տվյալ դեպքում նրա արարքը արդեն իսկ պետք է որակվի ոչ թե Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ կետի խախտում այլ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի համապատասխան ենթակետի խախտման հատկանիշներով, կախված նրա կողմից կատարած խախտման առանձնահատկություններից:

Տվյալ պարագայում Ժորա Պետրոսյանը վարույթն իրականացնող մարմնի կողմից հրավիրված լինելով որպես վկա հարցաքննության, նախապես իսկ տեղեկացված է եղել, որ հարցաքննվելու է իր պաշտպանյալ Անդրանիկ Մխիթարյանի հաղորդման հիման վրա ՀՔԾ-ում քննվող քրեական գործով և վարույթն իրականացնող մարմնին չներկայանալը արդեն իսկ կարող էր դիտվել փաստաբան Ժ. Պետրոսյանի կողմից իր պաշտպանյալի նպաստավոր շահերից չբխող և վերջինիս շահերին հակասող գործողություն:

Ժորա Պետրոսյանն իր 20.02.2015թ-ին տված բացատրության մեջ հայտնել է, որ ինքը, որպես վկա հարցաքննվել է, քանի որ քննիչի կողմից իրեն ուղղված հարցերը վերաբերվել են այն ժամանակահատվածին, որի ընթացքում ինքը չի հանդիսացել Ա. Մխիթարյանի Պաշտպանը և մինչ այդ էլ նրան իրավաբանական օգնություն ցույց չի տվել, ուստի և փաստաբանական գաղտնիք իր կողմից չի հրապարակվել:

Կանոնագրքի 2.6.1 , 3.5.3 և 6.1.1 ենթակետերով խախտումների վերաբերյալ , այն է՝

2.6.1 Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի

նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:

3.5.3 Փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի (վստահորդի) ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել:

6.1.1 Վստահորդի շահերը մինչդատական վարույթում ներկայացնելու ընթացքում փաստաբանի գործողությունները պետք է համապատասխանեն քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի պահանջներին:

Կարգապահական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներով ակնհայտ է, որ ՀՊԳ փաստաբան Ժորա Պետրոսյանը, որպես Անդրանիկ Մխիթարյանի պաշտպան ներգրավվել է 18.04.2014 թ-ին ՀՊԳ ղեկավար Մ. Ղազանչյանի թիվ 199/14 որոշման հիման վրա, քանզի Ա. Մխիթարյանի հաղորդումների հիման վրա ՀՔԾ-ում քրեական գործը հարուցվել է 14.04.2014 թ-ին և մինչ այդ ժամանակահատվածը Ժորա Պետրոսյանը Ա. Մխիթարյանի պաշտպանը չի հանդիսացել և Ա. Մխիթարյանը չէր կարող Ժ. Պետրոսյանի ներկայությամբ հայտարարել իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից բռնության ենթարկվելու մասին:

Չնայած այն հանգամանքին, որ Ժորա Պետրոսյանը 30.07.2014թ-ին ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչ Ռ Գևորգյանի կողմից հրավիրվել է հարցաքննության և որպես վկա հարցաքննվել է չի կարող դիտվել որպես Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1, 3.5.3 և 6.11 ենթակետերից որևէ ենթակետի խախտում, քանի որ Ժորա Պետրոսյանը հարցաքննվել է այն ժամանակահատվածի վերաբերյալ, երբ ինքը ներգրավված չի եղել որպես Ա. Մխիթարյանի պաշտպան, առավել ևս ցուցմունք է տվել՝ ելնելով վստահորդի նպաստավոր շահերից, չի կատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չի ընդունել դիրքորոշում առանց վստահորդի հետ համաձայնեցնելու:

ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչ Ռ. Գևորգյանի կողմից կայացված թիվ 62207614 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման 7-րդ էջի առաջին պարբերությունում տեղ գտած <<**ինչ վերաբերվում է Ա. Մխիթարյանի այն հայտարարությանը, որ քննիչները չեն արձանագրել ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ բռնություններ գործադրելու մասին արված հայտարարությանը հերքվել է ինչպես քննիչներ Հայկ Մարտիրոսյանի և Վիգեն Մարգարյանի, այնպես էլ Ա, Մարգարյանի պաշտպան Ժ. Պետրոսյանի ցուցմունքներով** >> մեջբերումը, որը և հիմք է հանդիսացել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի կողմից ՀՀ Փաստաբանների պալատի նախագահին Փաստաբան Ժորա Պետրոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմելու պահանջին անարժանահավատ է, չի համապատասխանում իրականությանը: Այն հիմնավորող ոչ մի ապացույց ձեռք չի բերվել, քանզի հերքվել է ինչպես Ժորա Պետրոսյանի 27.01.2015թ-ի և 20.02.2015 թ-ի բացատրություններով այնպես էլ թիվ 62207614 քրեական գործում տեղ գտած /կարգապահական վարույթին է ներկայացրել դիմողը/ Ժորա Պետրոսյանի 30. 07. 2014 թ-ի որպես վկա հարցաքննության արձանագրությամբ, որտեղ Ժորա Պետրոսյանը ցուցմունք է

տվել, որ 2014թվ-ի ապրիլի 18-ից ստանձնել է Ա. Մխիթարյանի շահերի պաշտպանությունը, տվյալ պահի դրությամբ նախաքննությունը ավարտված է եղել և քրեական գործը գտնվել է դատաքննության փուլում: Ժորա Պետրոսյանը ցուցմունքում նշել է, որ իր պաշտպանյալը իրեն ասել է, որ իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից բռնությունների վերաբերյալ արդեն իսկ բողոք է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և դրա կապակցությամբ հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն: Իսկ քննիչի ներկայությամբ քրեական գործի նյութերին ծանոթանալու ընթացքում Ա. Մխիթարյանը Ժորա Պետրոսյանին ասել է, որ իր բողոքի հիման վրա ՀՔԾ-ում քրեական գործի նախաքննությունը դեռևս ընթացքի մեջ է: / տես Ժ. Պետրոսյանի որպես վկա հարցաքննության արձանագրությունը:

18.04. 2014 թ-ի թիվ 199/14 հանրային պաշտպան նշանակելու մասին ՀՊԳ ղեկավար Մ. Ղազանչյանի կողմից կայացված որոշումը, որով հանրային պաշտպան Ժորա Պետրոսյանը նշանակվում է մեղադրյալ Անդրանիկ Արտուշի Մխիթարյանի պաշտպան թույլ է տալիս եզրակացնելու,որ նախքան Ժ. Պետրոսյանի կողմից Ա. Մխիթարյանի պաշտպանությունը ստանձնելը արդեն իսկ ՀՔԾ-ում հարուցված է եղել թիվ 62207614 քրեական գործը, կատարվել է նախաքննություն:

Պատասխանող՝ փաստաբան Ժորա Պետրոսյանի 30.07.2014 թ-ին ՀՀ ՀՔԾ –ում որպես վկա հարցաքննության արձանագրությունից ակնհայտ է , որ նրա կողմից չի կատարվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքին հակասող որևէ գործողություն ուստի և նրա արարքում բացակայում է կարգապահական որևէ խախտում>>:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.
Կարգապահական գործում առկա են հետևյալ ապացույցները.

1. 21.01.2015թ-ի թիվ Ե/2015 21.01./48 գրությունը՝ ուղարկված Հելսինկյան Քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի կողմից առ այն, որ թիվ 62207614 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման 7-րդ էջի առաջին պարբերությունում նշված այն միտքը, որ <<ինչ վերաբերվում է Ա. Մխիթարյանի այն հայտարարությանը, որ քննիչները չեն արձանագրել ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ բռնություններ գործադրելու մասին արված հայտարարությանը՝ հերքվել է ինչպես քննիչներ Հայկ Մարտիրոսյանի և Վիգեն Մարգարյանի, **այնպես էլ Ա.Մարգարյանի պաշտպան Ժ. Պետրոսյանի ցուցմունքներով** .. թույլ է տալիս պնդելու, որ նախաքննության մարմնի կողմից հարցաքննվել է նաև ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբան Ժ. Պետրոսյանը և վերջինիս նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ հիմք ընդունելով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 2-րդ գլխի պահանջները>>:

2. 03.07. 2014թ-ին ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչ Ռ. Գևորգյանի կողմից կայացված քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, ըստ որի 7–րդ էջի առաջին

պարբերությունում նշվածի փաստաբան Ժորա Պետրոսյանի ցուցմունքով նույնպես հերքվում է ոստիկանների կողմից Ա. Մխիթարյանի նկատմամբ բռնություն գործադրելու փաստը:

3. 30 .07. 2014 թ-ն ք. Գյումրիում ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչ Ռ. Գևորգյանի կողմից կազմված վկայի հարցաքննության արձանագրություն, ըստ որի վկա Ժորա Պետրոսյանը հարցաքննվել է և ցուցմունք տվել այն մասին, որ 2014թ. ապրիլի 18-ից ստանձնել է Անդրանիկ Մխիթարյանի պաշտպանությունը և տվյալ ժամանակահատվածի դրությամբ թիվ 18130813 քրեական գործով նախաքննությունը ավարտված է եղել և քրեական գործը գտնվել է դատաքննության փուլում:

Քննիչի այն հարցին, որ Ա.Մխիթարյանը մի քանի ամիս առաջ քննչական գործողության ժամանակ իր և քննիչի ներկայությամբ հայտարարել է, որ իրեն բերման ենթարկելուց ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել է բռնության և քննիչը չի արձանագրել այդ հայտարարությունը Ժորա Պետրոսյանը պատասխանել է, որ իր պաշտպանյալ Անդրանիկ Մխիթարյանը ասել է, որ իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից բռնությունների վերաբերյալ բողոք է ներկայացրել ՀՀ ՀՔԾ և դրա կապակցությամբ հարուցվել է քրեական գործ կատարվում է նախաքննություն: Որքան, որ Ժ. Պետրոսյանը հասկացել է Ա. Մխիթարյանի խոսքերից իր պաշտպանությունը ստանձնելու պահին նշված քրեական գործը հարուցված է եղել: Ինչ վերաբերվում է քննչական գործողության ժամանակ քննիչի ներկայությամբ նման հայտարարություն անելուն, ապա հիշում է, որ քրեական գործի նյութերին ծանոթանալու ընթացքում Ա. Մխիթարյանը ասել է, որ իր բողոքի հիման վրա ՀՔԾ-ում քրեական գործի նախաքննությունը դեռևս ընթացքի մեջ է: Ժորա Պետրոսյանը ցուցմունքում նշել է, որ այլ դեպք չի հիշում:

4. 18.04. 2014 թ-ի թիվ 199/14 որոշումը հանրային պաշտպան նշանակելու մասին կայացվել է ՀՊԳ ղեկավար Մ. Ղազանչյանի կողմից առ այն, որ հանրային պաշտպան Ժորա Պետրոսյանը նշանակվում է մեղադրյալ Անդրանիկ Արտուշի Մխիթարյանի պաշտպան:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 27.05.2015թ. տրամադրված ՆԸԴՂ/ԿԳ/303-15 տեղեկանքի համաձայն Ժորա Պետրոսյանը արտոնագիրը ստացել է 14.07.2012թ.: Նախկինում Ժորա Պետրոսյանի նկատմամբ կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ժորա Պետրոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.6.1 ենթակետի Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝

փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:

Նույն կանոնագրքի 3.5.3 ենթակետի համաձայն փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի (վստահորդի) ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել:

Կանոնագրքի 6.1.1 ենթակետի համաձայն վստահորդի շահերը մինչդատական վարույթում ներկայացնելու ընթացքում փաստաբանի գործողությունները պետք է համապատասխանեն քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի պահանջներին:

Տվյալ գործի պարագայում Պալատի խորհուրդը հարկ է համարում փաստել հետևյալը.

- կարգապահական գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր չի եղել պարզել փաստաբան Ժորա Պետրոսյանի պաշտպանյալ Անդրանիկ Մխիթարյանի դիրքորոշումը իր պաշտպանի վարքագծի վերաբերյալ,
- Հնարավոր չի եղել պարզել, թե ի վերջո թիվ 62207614 քրեական գործի շրջանակներում հարցաքննվելիս Անդրանիկ Մխիթարյանն ինչպես է ներկայացրել իր նկատմամբ բռնություն կիրառելու հանգամանքների մասին պաշտպանի ներկայությամբ հայտարարելը, որը քննիչի կողմից չի արձանագրվել: Մասնավորապես, գործին կցված ՀՀ ՀՔԾ քննիչի կողմից 03.10.2014թ. կայացված որոշման մեջ Անդրանիկ Մխիթարյանի կողմից տրված ցուցմունքը ներկայացված է հետևյալ կերպ. «Միաժամանակ հայտնել է, որ նախաքննության ընթացքում քննիչին պատմել է իր նկատմամբ բռնություն կիրառելու մասին, սակայն վերջինս չի արձանագրել այդ հայտարարությունը: Իսկ ավելի ուշ քննիչի մոտ նման հայտարարություն է արել նաև իր պաշտպան Ժորա Գուրգենի Պետրոսյանի ներկայությամբ, ինչը նույնպես չի արձանագրվել»: Ներկայացված ձևակերպումից որևէ կերպ պարզ չի դառնում, թե երբ, քննության որ փուլում, ինչ գործողության ընթացքում կատարված հայտարարության մասին է իր ցուցմունքում նշել Անդրանիկ Մխիթարյանը:
- Համադրելով քննիչի կողմից կայացված որոշման մեջ Անդրանիկ Մխիթարյանի ցուցմունքի վերլուծությունը Ժորա Պետրոսյանի՝ որպես վկա հարցաքննության արձանագրությամբ ամրագրված ցուցմունքի հետ, պարզվում է, որ 03.10.2014թ. կայացված որոշման մեջ քննիչի կողմից նշված եզրահանգումը, թե Ժորա Պետրոսյանի ցուցմունքով հերքվել է Անդրանիկ Մխիթարյանի ցուցմունքը, սխալ է, քանի որ համադրության արդյունքում ցուցմունքների միջև որևէ հակասություն ի հայտ չի գալիս:
- Որպես վկա հարցաքննվելիս փաստաբան Ժորա Պետրոսյանը հայտնել է, որ իր պաշտպանյալ Անդրանիկ Մխիթարյանը կիրառված բռնությունների մասին հայտարարել է քրեական գործի նախաքննության ավարտման մասին քննիչի կողմից նրանց հայտնելու պահին: Իսկ պարզել, թե Ա.Մխիթարյանի կողմից հնչեցված հայտարարությունն արդյո՞ք արձանագրվել է, թե ոչ,

հնարավոր չեղավ՝ նախաքննության ավարտման վերաբերյալ հայտնելու մասին արձանագրության բացակայության պատճառով:

- Կարևոր է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ՀՀ ՀՔԾ քննիչի կողմից փաստաբան Ժորա Պետրոսյանի հարցաքննության ժամանակ առաջ քաշված հարցն ինքնին փաստաբանին անգործություն ցուցաբերելու մեջ մեղադրող բնույթ է ունեցել, և տվյալ պարագայում Ժորա Պետրոսյանը դիրքորոշում է հայտնել նաև փորձելով հերքել իր կողմից ցուցաբերած ենթադրյալ անգործությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Պալատի խորհուրդը գտնում է, որ վերը նշված հանգամանքների պարագայում հնարավոր չէ եզրահանգել, որ փաստաբան Ժորա Պետրոսյանը խախտել է «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.6.1, 3.5.3, և 6.1.1 ենթակետերի պահանջները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 10.02.2015թ. թիվ 27-Ա/ԿԳ-15004 որոշմամբ փաստաբան Ժորա Պետրոսյանի (արտոնագիր թիվ 1523) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ:***

2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Ժորա Պետրոսյանին և դիմող Արթուր Սաքունցին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Երվանդ Վարոսյան**